

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

15 նոյեմբերի 2013 թվական

գ. Հայկաձոր

Համաձայն Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի հոկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկաձոր համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 128 կարգադրության, աշխատանքային խումբը մասնակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Կառլեն Աբրահամյանի (խմբի ղեկավար), Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Արտյոմ Սարգսյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Հայկ Սարգսյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ Արթուր Գրիգորյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Արմեն Հարությունյանի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկաձոր համայնքի ղեկավար Գևորգ Սարգսյանի, Հայկաձոր համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի մարտի 1-ից մինչև 2013 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի հոկտեմբերի 30-ին և ավարտվել՝ 2013 թվականի նոյեմբերի 12-ին:

### **Վարչական հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը.**

1) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, համայնքի նորընտիր ավագանին 2012 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 16-Ն որոշմամբ (արձ.՝ թիվ 9) ընդունել է իր կանոնակարգը.